ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 1008-Ա

ԱՆԱՀԻՏ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ՝ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱ ՀԱՅԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի, Սայաթ-Նովա փողոցի, 7Ա շենքի թիվ 45 բնակարանի բնակիչ՝ Անահիտ Սամվելի Հարությունյանի 2025 թվականի օգոստոսի 25-ի թիվ 4306 դիմումը և Արմավիր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 29-ի թիվ 15 նիստի արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Թույլատրել Անահիտ Սամվելի Հարությունյանին /ծնված՝ 18.03.1979թ./ գրավադրելու իր անչափահաս երեխա՝ Հայկ Վլադիմիրի Գևորգյանին /ծնված՝ 24.12.2010թ./ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի, Սայաթ-Նովա փողոցի, 6Ա շենքի, թիվ 33 բնակարանի 1/3 բաժնեմասը:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք. Արմավիր